«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 81.1.-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 81.1. Շինարարության ընթացքում մթնոլորտային օդի պահպանման օրենսդրությամբ սահմանված պահանջները չկատարելը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող (վերակառուցվող կամ վերականգնվող կամ ուժեղացվող կամ ընդլայնվող կամ արդիականացվող կամ վերազինվող կամ հիմնանորոգվող կամ ընթացիկ նորոգվող կամ քանդվող կամ ապամոնտաժվող) շենքերի կամ շինությունների շինարարության ընթացքում մթնոլորտային օդի պահպանման օրենսդրությամբ սահմանված պահանջները չկատարելը՝ փոշու արտանետումների կանխարգելման համար շինարարական հրապարակները չցանկապատելը, կամ շենքը կամ շինությունը շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով չծածկելը, կամ օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, այդ թվում՝ ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների հարակից տարածքը խոնավ չպահելը, կամ շինարարական հրապարակի սահմաններից դուրս կեղտաջրերի թափանցումը չբացառելը, կամ հողման աշխատանքներ իրականացնելիս փոշու արտանետումները բացառող սարքեր կամ տեխնոլոգիաներ չօգտագործելը, կամ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը կամ այլ սորուն նյութերը կամ շինարարական աղբը փակ տարածքներում չպահեստավորելը, կամ շինարարական հրապարակից դուրս եկող բեռնատար մեքենաները անթափանց թաղանթով չծածկելը, ավտոտրանսպորտային միջոցների անվադողերը չլվանալն առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) ֆիզիկական անձ հանդիսացող կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուր հազար դրամի չափով,

2) իրավաբանական անձ հանդիսացող կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեց հարյուր հազար դրամի չափով,

3) իրավաբանական անձ հանդիսացող շինարարական աշխատանքներ իրականացնողի նկատմամբ՝ պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների համաձայն հաշվարկված ծախսերի) 0.05%-ի չափով,

4) իրավաբանական անձ հանդիսացող տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տեխնիկական հսկողության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 154[1]-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 154[1]. Կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված ժամկետներում չավարտելը**

1. Կառուցապատումը (կառուցումը կամ վերակառուցումը կամ վերականգնումը կամ ուժեղացումը կամ ընդլայնումը կամ արդիականացումը կամ վերազինումը կամ հիմնանորոգումը կամ քանդումը կամ ապամոնտաժումը) համապատասխան քաղաքաշինական գործունեության համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չավարտելն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) կառուցապատողի նկատմամբ՝ շինարարության նախահաշվային արժեքի (իսկ նախահաշվի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 3%-ի չափով,

2) շինարարական աշխատանքներ իրականացնողի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված

շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 3%-ի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) կառուցապատողի նկատմամբ՝ շինարարության նախահաշվային արժեքի (իսկ նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով՝ իրավաբանական անձի դեպքում, 5%-ի չափով՝ ֆիզիկական անձի դեպքում,

2) շինարարական աշխատանքներ իրականացնողի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով՝ իրավաբանական անձի դեպքում, 5%-ի չափով՝ ֆիզիկական անձի դեպքում:

Հոդված 3. Օրենսգրքի 157[4]-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 157[4]. Նախագծային փաստաթղթեր մշակողների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտումներով, այդ թվում՝ առանց շինարարական արտադրության կազմակերպման նախագծի քաղաքաշինական փաստաթղթեր կազմելը, նախագծային փաստաթղթերի փորձաքննություն իրականացնողների կողմից դրանց վերաբերյալ փորձագիտական դրական եզրակացություն կամ նախագիծը մշակողի կամ շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում գրավոր երաշխավորագիր տալը (բացառությամբ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության նորմատիվային պահանջների խախտման դեպքերի)**

1. Նախագծային փաստաթղթեր մշակողների կողմից օրենսդրության պահանջների խախտումներով, այդ թվում՝ առանց շինարարական արտադրության կազմակերպման նախագծի քաղաքաշինական փաստաթղթեր մշակելը, նախագծային փաստաթղթերի փորձաքննություն իրականացնողների կողմից դրանց վերաբերյալ փորձագիտական դրական եզրակացություն տալը կամ նախագիծը մշակողի կամ շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում գրավոր երաշխավորագիր տալն առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) նախագծային փաստաթղթեր մշակողի նկատմամբ՝ նախագծային աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի

բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված նախագծային աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով,

2) նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննություն իրականացնողի նկատմամբ՝ նախագծի քաղաքաշինական փորձաքննության խորհրդատվական ծառայության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված փորձաքննության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 20%-ի չափով,

3) շինարարական աշխատանքների կապալառուի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.01%-ի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով նվազել են շենքի կամ շինության ամրության, կայունության կամ հուսալիության նորմատիվային ցուցանիշներն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) նախագծային փաստաթղթեր մշակողի նկատմամբ՝ նախագծային աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված նախագծային աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 30%-ի չափով,

2) նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննություն իրականացնողի նկատմամբ՝ նախագծի քաղաքաշինական փորձաքննության խորհրդատվական ծառայության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված փորձաքննության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 40%-ի չափով,

3) շինարարական աշխատանքների կապալառուի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.03%-ի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով շինարարության ընթացքում տեղի է ունեցել տեխնիկական վթար՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) նախագծային փաստաթղթեր մշակողի նկատմամբ՝ նախագծային աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված նախագծային աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 50%-ի չափով,

2) նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննություն իրականացնողի նկատմամբ՝ նախագծի քաղաքաշինական փորձաքննության խորհրդատվական ծառայության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված փորձաքննության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 60%-ի չափով,

3) շինարարական աշխատանքների կապալառուի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.1%-ի չափով:

Հոդված 4. Օրենսգրքի 157.7-րդ հոդվածում «երեքհարյուրապատիկի» բառը փոխարինել «հինգհարյուրապատիկի» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 157[8]-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 157[8]. Շինարարության ընթացքում հաստատված նախագծի, շինարարական արտադրության կազմակերպման, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի և սահմանված ստանդարտների պահանջները խախտելը**

1. Շինարարության (հիմնանորոգման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման), ընդլայնման, արդիականացման) ընթացքում հաստատված նախագծի, շինարարական արտադրության կազմակերպման, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի ու սահմանված ստանդարտների պահանջները խախտելը, եթե դրանք ազդեցություն չեն ունեցել շենքի կամ շինության ամրության, կայունության կամ հուսալիության վրա, կամ վտանգավոր չեն մարդկանց (այդ թվում շինարարական հրապարակում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության պահպանման) կամ շրջակա միջավայրի համար և կարող են վերացվել առանց տվյալ տեղամասում շինարարական աշխատանքները դադարեցնելու՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) շինարարական աշխատանքներ իրականացնողի նկատմամբ՝

շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.03%-ի չափով,

2) տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տեխնիկական հսկողության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով։

2. Շինարարության (հիմնանորոգման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման), ընդլայնման, արդիականացման) ընթացքում հաստատված նախագծի, շինարարական արտադրության կազմակերպման, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի ու սահմանված ստանդարտների պահանջները խախտելը, եթե դա կարող է ազդեցություն ունենալ շենքի կամ շինության ամրության, կայունության կամ հուսալիության վրա, կամ վտանգավոր է մարդկանց (այդ թվում՝ շինարարական հրապարակում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկող և բանվորական անձնակազմի առողջության) կամ շրջակա միջավայրի համար և չի կարող վերացվել առանց տվյալ տեղամասում շինարարական աշխատանքները դադարեցնելու՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) շինարարական աշխատանքներ իրականացնողի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.1%-ի չափով,

2) տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տեխնիկական հսկողության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 30%-ի չափով։

3. Շինարարության (հիմնանորոգման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման), ընդլայնման, արդիականացման) ընթացքում հաստատված նախագծի, շինարարական արտադրության կազմակերպման, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի ու սահմանված ստանդարտների պահանջները խախտելը, եթե դա հանգեցրել է տեխնիկական վթարի՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) շինարարական աշխատանքներ իրականացնողի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի

բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.3%-ի չափով,

2) տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տեխնիկական հսկողության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 50%-ի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում շինարարական աշխատանքներ իրականացնողի և տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքների կրկնապատիկի չափով:

5. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում շինարարական աշխատանքներ իրականացնողի և տեխնիկական հսկողության ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 157[9]-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 157[9]. Շինարարության ընթացքում օրենսդրությամբ (պայմանագրով) սահմանված դեպքերում տեխնիկական և հեղինակային հսկողություն չիրականացնելը, հսկողության իրականացման կարգը խախտելը**

1. Օրենսդրությամբ (պայմանագրով) սահմանված դեպքերում շինարարության (հիմնանորոգման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման), ընդլայնման, արդիականացման) ընթացքում տեխնիկական և հեղինակային հսկողություն չիրականացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) կառուցապատողի նկատմամբ՝ շինարարության նախահաշվային արժեքի (իսկ նախահաշվի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.5%-ի չափով,

2) շինարարական աշխատանքներ իրականացնողի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.5%-ի չափով,

3) տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տեխնիկական հսկողության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 20%-ի չափով,

4) հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ հեղինակային հսկողության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 30%-ի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանած արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելն՝

առաջացնում է տուգանք կառուցապատողի, շինարարական աշխատանքներ իրականացնողի, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ մատուցողների նկատմամբ՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքների կրկնապատիկի չափով:

3. Տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնողների կողմից շինարարության (հիմնանորոգման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման), ընդլայնման, արդիականացման) ընթացքում շինարարության որակի տեխնիկական և հեղինակային հսկողության իրականացման օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում տեխնիկական և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայություններ մատուցողների նկատմամբ՝ տեխնիկական և հեղինակային հսկողության պայմանագրային արժեքների (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված տեխնիկական և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայությունների արժեքների խոշորացված ծախսերի) 40%-ի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանած արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում տեխնիկական և հեղինակային

հսկողության խորհրդատվական ծառայություններ մատուցողների նկատմամբ՝ տեխնիկական և հեղինակային հսկողության պայմանագրային արժեքների (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված տեխնիկական և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայությունների արժեքների խոշորացված ծախսերի) 50%-ի չափով:

5. Շինարարության որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողների կողմից քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին շինարարությունում տեխնիկական վթարի մասին քառասունութ ժամվա ընթացքում գրավոր չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տեխնիկական հսկողության պայմանագրային արժեքի, (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 20%-ի չափով:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցողի նկատմամբ՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 157.15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 157.15. Կառուցապատողների կողմից շինարարական արտադրության կազմակերպման ընթացքում շինարարական հրապարակում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի, փողոցների երթևեկության, հետիոտնային անցումների և հետիոտների անվտանգության, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման պայմանները չապահովելը**

1. Կառուցապատողի կողմից շինարարական արտադրության կազմակերպման ընթացքում շինարարական հրապարակում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի, փողոցների երթևեկության, հետիոտնային անցումների և հետիոտների անվտանգության, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման պայմանները չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ՝ շինարարության նախահաշվային արժեքի (իսկ նախահաշվի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 0.1%-ի չափով:

2. Կառուցապատողի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք կառուցապատողի նկատմամբ՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 8. Օրենսգրքի 157.16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 157.16. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության նորմատիվային պահանջներին չբավարարող կառուցապատման թույլտվություններ և այլ փաստաթղթեր տալը, դրանք իրագործելը**

1. Բնակավայրերի նախագծման կամ կառուցապատման, բնակելի, հասարակական ու արտադրական նշանակության շենքերի կամ շինությունների, տրանսպորտային ենթակառուցվածքների նախագծման կամ կառուցման (վերակառուցման կամ վերականգնման կամ հիմնանորոգման կամ արդիականացման կամ վերազինման կամ ընդլայնման) դեպքում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ճարտարապետահատակագծային առաջադրանքում և նախագծում մատչելիության նորմատիվային պահանջներ ու միջոցառումներ չնախատեսելն առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) համայնքի ղեկավարի նկատմամբ՝ հինգ հարյուր հազար դրամի չափով,

2) նախագծային փաստաթղթեր մշակողի նկատմամբ՝ նախագծային աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված նախագծային աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջոցառումներ չպարունակող՝ բնակավայրերի կառուցապատման, բնակելի, հասարակական ու արտադրական նշանակության շենքերի կամ շինությունների (այդ թվում՝ տրանսպորտային ենթակառուցվածքների) կառուցման (վերակառուցման կամ վերականգնման կամ հիմնանորոգման կամ արդիականացման կամ վերազինման կամ ընդլայնման) նախագծային փաստաթղթերի վերաբերյալ նախագծային փաստաթղթերի փորձաքննություն

իրականացնողների կողմից դրանց վերաբերյալ փորձագիտական դրական եզրակացություն կամ նախագիծը մշակողի կամ շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում գրավոր երաշխավորագիր տալն առաջացնում է տուգանքի նշանակում՝

1) նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննություն իրականացնողի նկատմամբ՝ նախագծի քաղաքաշինական փորձաքննության խորհրդատվական ծառայության պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված փորձաքննության խորհրդատվական ծառայության արժեքի խոշորացված ծախսերի) 30%-ի չափով:

2) նախագծային փաստաթղթեր մշակողի նկատմամբ՝ նախագծային աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված նախագծային աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով:

3) շինարարական աշխատանքներ իրականացնողի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջոցառումներ չպարունակող՝ բնակավայրերի կառուցապատման, բնակելի, հասարակական ու արտադրական նշանակության շենքերի կամ շինությունների, տրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման (վերակառուցման կամ վերականգնման կամ հիմնանորոգման կամ արդիականացման կամ վերազինման կամ ընդլայնման) նախագծային փաստաթղթերի հիմքով շինարարության թույլտվություն տալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում համայնքի ղեկավարի նկատմամբ՝ շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքի (իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով հաշվարկված շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ծախսերի) 10%-ի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում համապատասխան պաշտոնատար և իրավաբանական անձանց նկատմամբ՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 9. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված իրավախախտումներից բխող իրավահարաբերությունների վրա։